

ԱՍՏՈՒ ԿԱՄՔԸ, ԹԵ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ



ԽՈՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1926

30 JUL 2010

3
74

Գյուղատնիսխ
ՊՈԴԵՎԱՑԼՍԿԻ

ԱՍՏԵՐԻ ԿԱՄՔԸ

ԹԵՇ

ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

առաջակա պահանջակա և կուսակա
մանակա քայլութեան առաջար
դա առաջար առաջար ա
առաջար առաջար ա

Թարգմ. Ա. Ա. ԲԵՇ. ԲՈՒՆԻՆԻ.

ԽՈՀՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԿԱ

1926

22 JUL 2013

14874

Напечатан в типографии Госиздата
„Красный Пролетарий“. Москва,
Пименовская ул., д. № 16,
в количестве 4000 экз.
Главлит № 54298

Дублетный фонд
Госуд. библиотеки СССР
им. В. И. Ленина

4651-84

ԱՍՏՈՒ ԿԱՄՔԸ ԹԵՇ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ.

«Աստված վողորմած եւ, ասում ե առածը:
Մինչև հիմա յել հողագործը կամ խաշնարածը
կրկնում ե—«առանց աստծու կամքի վոչինչ չի
լինի»:

Ի՞նչն ե պատճառը, վոր գյուղացիներից շա-
տերն այդպես են մտածում: Ինչո՞ւ նրանք իրենց
ուժին, գիտությանն ու փորձին չեն դիմում:

Դրա պատճառն այն ե, վոր մեր հայրերն
ու պապերը սովորեցրել են մեր հույսը սրբերի
և աստծու կամքի վրա դնել:

Թագավորի և կալվածատերերի իշխանությու-
նը ժողովրդին ճորառության և տգիտության մեջ
եր պահում: Կալվածատերի համար ձեռնատու չեր,
վոր գյուղացիք ուսում առնելին: Բայց վոր գյու-
ղացին վատ, աղքատ ե ապրում, յերաշտի ժա-
մանակ քաղցը նրան տանջում ե, — պատճառն
այն ե, վոր նա տգիտ ե. այդ մասին կալվածա-
տերն ու հողատերը շատ քիչ եյին մտածում:

Իսկ գյուղացին շարունակում եր իր հույսն
աստծու վրա դնել:

Հողագործը մտածում եր, վոր իր գործի հա-
ջողությունը կախված ե շատ այնպիսի բաներից,
վորտեղ մարդը վոչինչ չի կարող անել։ Հաճախ
այդ հաջողությունը կախված ե թևորյան ուժե-
րից, վորոնց առաջ անուս մարդը շվարած եր
մնում և շատ անգամ կարծում, թե այդ—բարի
ու չար աստվածների ուժերի շնորհքն ե։

Բնության այդ ինչ ուժեր են։

Ամենից առաջ՝ հողի պտղաբերությունն ե, վոր տարեց տարի վատանում ե։ Հետո անձրեվ-
ները, վոր յերեմն բոլորովին չեն գալիս (յե-
րաշտ ե լինում), կամ թե չե՝ գալիս են, բայց
վոչ իրեն ժամանակին։ Հետո բույսերի ու կեն-
դանիների զանազան հիվանդությունները։ Վեր-
ջապես՝ կարկուտը, կայծակը... դեռ քիչ բաներ
կան, վորոնց առաջ գյուղացի սաշպարը կանգ ե
առնում և մոլորված ձեռքը ծոցը դնում։ Գյու-
ղերում քիչ ե պատահում, վոր փորձանք ե լի-
նում։ Հողագործը փոխանակ անմիջապես ոգնելու
կամ դրությունը փրկելու, դառնում ե դեպի
աստված՝ «զիտա, աստված ջան» ասելով։

Վո՞րտեղ ե գյուղացին սովորել հավատար
թե՝ աստծու աչքը միշտ հողագործի վրա յե։

Ահա թե վորտեղ։ Անուս մարդու համար
բնության շատ յերկույթները անհասկանալի
յեն։ Դրանք մարդուն անհասկանալի եյին շատ

հին ժամանակներից, յերբ մարդը բացի հողա-
գործությունից ուրիշ վոչ մի բանով չեր զբաղ-
վում։ Այդ հին ժամանակներում վոչ վոք չգի-
տեր, վոր անտեղի անձը եր, տավարը ջարդող
կայծակը, կենդանիների հիվանդությունը, մի
խոսքով՝ ամեն ինչ վորոշ որենքով ե կատար-
վում, և վոր մարդու կամքից չե կախված, բայց
աստված ել գործ չունի։

Բայց մարդը ուզում եր բացատրել անբա-
ցատրելին և սկզբում յերեակայում եր, թե
բնությունը լցված ե չար ու բարի ուժերով,
չար ու բարի աստվածներով։ Իսկ յերբ մարդը
վերջ տվեց բազմաստվածությանը հավատալուն,
սկսեց բնության յերեսույթները կամ «աստծու
շնորհ», կամ «աստծու վրեժ» և «աստվածային
գործ» անվանել, ասելով, թե այդ ուղարկված
ե մարդուն փորձելու։ Ահա այդպես են բացա-
տրվել շատ անհասկանալի բաները, վորոնք պա-
տահում են վորարդի, խաշնարածի, հողագործի
կյանքում։ Հետո արդեն մարդը շատ չեր մտա-
ծում նոր գաղտնիքների վրա։ Յեթե հանկարծ
մի անձանոթ բան եր պատահում, «աստծու կամ-
քըն ե»—ասում եր և հանգստանում։ Ինչ կա-
րիք կար մտածելու, գլուխ կոտրելու։

Հին ժամանակ կուպաշաշտների քրմերը (կու-
պաշտների տերտերները), հետո ել քրիստոնյա

տերտերները լավ գիտեյին բնության ուժերի
մասին։ Բայց ժողովրդի հավատը դեպի «աստծու
կամքը» վո՛չ միայն չեյին փարատում, այլ ամեն
կերպ աշխատում եյին պահպանել։ Յեվ իսկա-
պես, յերբ մարդուն վորևե գժբախտություն ե
պատահում, ասում են՝ աստված բարկացել ե,
հարկավոր ե աղոթք անել, մոմ ու խունկ ծխել,
մատաղ մորթել։ Յեվ մարդու մատաղն աստված
ընդունում եր ու տերտերները ոգտվում եյին այդ
բանից։

Պատահում եր, վոր մարդու գործերը լավ
եյին գնում։ Ամենքն ասում եյին, թե աստծուց
շնորհակալ յեղիք ու առաջուց նրան մատաղ արա,
վորպեսզի մյուս անդամ ել աստված գործիդ
քոմակ լինի։

Մեր ժամանակի տերտերները մեծ մա-
սամբ ուսում առած մարդիկ են։ Նրանցից շա-
տերը լավ գիտեն, վոր վոչ աստված, վոչ սա-
տանա և վոչ ել հրաշք չկան։ Լավ հասկանում
են, վոր բնության մեջ կատարվող բոլոր յերե-
վույթները տեղի յեն ունենում միայն բնության
որենքների հիման վրա։ Այդ ամենը գիտնալով,
նրանք իրենց ոգտի համար մինչև հիմա ել
մաղթանք են անում, վորպեսզի աստված անձ-
րեւ տա։

Ժողովրդի տգիտությունն ու աստծու վրա

դրած հույսը, տերտերից բացի, ուրիշներին ել
ոգտակար եր։ Թագավորին ու նրա իշխանու-
թյան համար այդ շատ ձեռնտու յեր։ Հենց զբա
համար ել թագավորի շինովսիկներն ու կողմնա-
կիցները տերտերների կողմն եյին բոնում՝ ժո-
ղովրդի գիտակցությունը բթացնելու գործում։
Այդ հասկանալի յե։ Զե՞ վոր տերտերները ժողո-
վրդին ներշնչում եյին, թե ճորտությունը ան-
հրաժեշտ ե։ Հավատացնում եյին, վոր «վոչխար-
ների հոտը առանց հովվի չի կարող լինել» և
վոր «իշխանությունը աստծուց ե»։

Նրանք ոգնում եյին ժողովրդին թալանելու
մեջ, ասելով ավետարանի խոսքերը. «տուր կայ-
սրինը՝ կայսեր, աստվածայինը—աստծուն»։ Մի
խոսքով, ժողովրդին թալանելու համար լավ խումբ
եյին կազմել տերտերներն ու թագավորական իշ-
խանությունը։

Բայց այն ժամանակներն անցան։

Ժողովուրդն հիմա ինքն ե յերկիրը կառա-
վարում։ Ժամանակ ե, վոր իր խելքով նա կա-
ռավարի։ Իսկ գյուղացու համար հասել ե ժամա-
նակը, վորպեսզի աչքերը տրորի ու զանազան
հրաշների ու աստվածային կամքի վրա բաց
աչքերով նայի։ Ժամանակ ե, վոր ամեն մի յե-
րեւոյթի պատճառը վնտրի, լի ու կարդա գի-
տության բացատրությունները։

Վերցնենք, որինակի համար՝

յերկրի պտղաբերությունը:

Ժողովրդի մեջ մինչև հիմա մնացել եւ այն առասպելը, թե առաջ՝ հին ժամանակները՝ յերկիրը շատ պտղաբեր եւ յեղել, չեքիաթների և պատմվածքների մեջ ասված եւ, թե «գետերը կաթ ու մեղը եյին ծորում»։ Այսպես չեւ հիմա. յերկրի ուժը պակասել եւ, Ասում են՝ «աստված բարկացել եւ մարդկանց վրա, դրա համար եւ յերկրի պտղաբերությունը պակասել եւ»։

Դրա պատճառն ի՞նչ եւ։

Զե վոր առաջները, հին ժամանակ, ինչպես պատմությունների մեջ են ասում, մեր նախնինքները կուապաշտներ եյին։ Նրանք յերկրպագում եյին կուռքերին, իսկ «իսկական աստծուն» չեյին հավատում։ Իսկ այս «իսկական աստվածը» նրանց հաջողություն եր տալիս—քանի վոր հին մարդկանց ժամանակը հեքիաթային պտղաբերություն կար։

Մարդիկ դարձան քրիստոնյաներ, աստծու համար յեկեղեցիներ ու վանքեր շինեցին, իսկ աստված նրանցից յերես դարձրեց ու յերկրի պտղաբերությունը քչացրեց։ Շատ գետերի

մեջ վոչ միայն «կաթ ու մեղը» չի հոսում, այլ նույն իսկ ջուր չմնաց։

Անցած վոսկի ժամանակի մասին միայն հեքիաթների՝ մեջ չեւ պատմված։

Հին մարդիկ դեռ մինչև հիմա եւ հիշում են ու պատմում, վոր իրենց ջահել ժամանակը արտերի բերքը առատ եր, անպետք խոտեր քիչ եյին բնում դաշտերում, անտառներում շատ վորս կար, իսկ գետերի մեջ՝ ձուկ, անձրեւ գալուս եր իր ժամանակին, իսկ ձմեռները ձյունը շատ եր լինում։ Թեև ծերերը չորոցով եյին յերկիրը փորփրում, մեքենա և ուրիշ տեսակի գործիքներ չունեյին, բայց յերկրի բերքն ավելի յեր, քան հիմա։ Հիմա գործ են ածում մեքենաներ, հողը պարարտացնում են, բայց բերքը հին ժամանակվա բերքի նման չեւ։

— «Հենց եղ ե վոր կա, ասում են մարդիկ, աստված մեր մեղքերի համար եւ այդպես անում»։ Ծերերի այդ խոսքերը տերտերները հաստատում են։

Բայց բանից դուրս եւ գալիս, վոր հողի պըտղաբերությունը միայն հերկելուց և պարարտացումից չեւ կախված։ Առաջ բոլոր հողերը չեյին մշակում, գյուղացիք մի շարք տարիներ աշխատում եյին հողի մի կտորի վրա, հետո այդ հողից կամ բոլորովին հեռանում եյին և կամ վերադառ-

Նում եյին դրան մի քանի տարուց հետո: Դրա
համար ել ամեն տարի հաջող բերք ունեյին:

Գյուղատնաեներն ու քիմիկուները, վոր
ուսումնասիրել են հողի կազմը և բաղադրությունը,
ասում են, վոր թե մեկը և թե մյուսը փոխ-
վում են: Երանք ասում են, վոր տարեց տարի
հողի սննդարար տարրերը պակասում են, հո-
ղի մանր կոշտային գրությունը հետզհետե
փոխվում է ու դառնում փոշի: Կոշտավոր հողի
մեջ բույսերի արմատները ազատ են աճում,
իսկ խոնավությունը լավ է պահվում և ծծվում:
Իսկ փոշիացած հողի մեջ, վորը շատ շուտ ամ-
րանում է, բույսի արմատը շատ դժվարությամբ
է առաջ անցնում և ջուրը վատ ծծում: Այդպիսի
հողում ջուրը մեծ մասամբ յերկար չի մնում:
Հողի յերեսով վար է հոսում: Այդպիսի հողի
յերեսը անձրեից հետո պնդանում է, ճաքճքվում
է և խոնավությունը գետնի միջից շատ շուտ
է դուրս գալիս:

Հայտնի յե, վոր բույսի յուրաքանչյուր տե-
սակը գետնից առնում է միայն իրեն պետք նյու-
թերը: Այդ է պատճառը, վոր միենույն բույսերից
հոգնած հողը հին ժամանակները հանգստանում
եր մի քանի տարի, և հավաքում ոգտակար
հյութեր:

Ահա թե ինչու առաջվա բերքը ավելի լավ
եր. բայց այդ բոլորը չե:

Գիտնականները գտել են, վոր բույսերն
իրենք ազդում են հողի վրա: Բանից դուրս ե
գալիս, վոր ամեն մի բույս հողից վոչ միայն
վերցնում ե մնադարար հյութեր, այլ և տալիս ե
հողին իր մնացորդները: Այդ մնացորդները հողի
մեջ լուծվում են վոչ թե կենդանու աղբի նման,
այլ հյութերի միջոցով, վորոնք հողի մեջ են անց-
նում բույսերի արմատների միջոցով: Այդ մնա-
ցորդներն ուրիշ բույսերի համար վոչ թե ֆե-
սակար են, այլ, ընդհակառակն, ոգտակար:

Իսկ հիմա տեսնենք թե ի՞նչ ե

անձրեվը:

ԶԵ վոր ծեր մարդիկ ասում են, թե առաջ
անձրեներ շատ եյին գալիս, և իր ժամանակին:

Դրան գիտնականները այս պատասխանն են
տալիս:

Առաջ մեզանում շատ անտառներ կային:
Ամեն մարդ ել գիտե, վոր անտառի մեջ խոնա-
վությունը ավելի յե պահվում, քան դաշտում:

Այժմ շատ անտառներ կտրել են: Կնշանակի
չորությունը ավելացել է:

Ուրեմն այստեղ մարդն է մեղավոր:

ի՞նչ անենք. — յերբ սխալ ե արված, հարկա-
վոր ե ուղղել:

Գիտնական գյուղատնտեսներն այս հարցումն
ել գյուղացուն ոգնության են գալիս: Նախ և
առաջ հարկավոր ե, հնարավորության սահման-
ներում, անտառներ տնկել: Հետո — արհեստական
գոռոգում ստեղծել: Տեղեր կան, վորտեղ ան-
տառներ գցել չի կարելի, իսկ արհեստական վո-
ռոգումը դժվար կամ անհնարին ե, այդ դեպ-
քում գիտնականները խորհուրդ են տալիս ցա-
նել և մշակել այնպիսի բույսեր, վորոնք յերաշ-
տից չեն վախենում:

Աշխարհի յերեսին զանազան յերկրներ կան:
Կան այնպիսի յերկրներ, վորոնք տարվա ըն-
թացքում համարյա անձրեի յերես չեն տեսնում:
Կան նաև այնպիսիները, վորտեղ անձրե շատ
ե գալիս: Հասկանալի յե, վոր բույսերը այդ
յերկրներում միատեսակ չեն: Այն բույսերը,
վորոնք քիչ ջուր են պահանջում և կարող են
աճել չոր և անանձրե յերկրներում, կարող են
աճել նաև մեզ մոտ: Գիտնական գյուղատնտես-
ների խորհրդով այդպիսի բույսերի սերմերը
բերվում են մեզ մոտ և ցանկում:

Բացի դրանից, ամեն մի գյուղացի գիտե, վոր
յերաշտի ժամանակ միԱնույն արտի մեջ շատ
հասկեր իսկի չեն բարձրանում և միայն շատ

քիչ հասկեր են հացահատիկ տալիս: Այդ ցույց
ե տալիս, վոր միԱնույն բույսի զանազան սեր-
մերը միատեսակ չեն աճում և զարգանում: ՄիԱնույն բույսի այն հասկերը, վոր յերաշտի
ժամանակ ևս հացահատիկ են տալիս, գիտնական
գյուղատնտեսները փորձերի համար առանձին
հավաքել են: Իսկ հետո այդպիսի սերմերից
ստացել են այնպիսի բույսեր, վորոնք յերաշտի
ժամանակ ազատ աճում են:

Բանից դուրս ե գալիս, վոր յերկրի պտղա-
բերությունը առատացնելու համար մարդիկ ուժ
են տվել իրենց խելքին, աշխատել են ու քրտնել
և վերջիվերջո յեկել վորոշ յեղբակացության:

Այժմ հարցը պարզ է: Հողագործի բարեկե-
ցիկ վիճակը կախված ե միայն իրենից: Հարկա-
վոր ե, վորպեսզի հողագործը կարողանա վարվել
թևորյան հետ: Ահա թե վորտեղ ե հողագործու-
թյան գաղտնիքը :

Տերտերներից շատերը հիմա այդ լավ են հաս-
կանում: Շատ տերտերներ իրենց գյուղատնտե-
սական աշխատանքներում ոգտվում են գիտու-
թյան ցույց տված ճանապարհներից: Իսկ յերբ
հարցը գալիս ե գյուղացուն, ասում են, թե՝ «այդ
կախված ե աստծու կամքից»

Վերցնենք հենց անձրեւ:
Սկսվում ե յերաշտ կամ իրար յետերից անձրեւ

ե գալիս: Դաշտերում փչանում են ցորենը, գարին: Տերտերներն իսկույն մաղթանքի պոչից են բռնում: Աղոթք են անում, մատաղ մորթում, իսկ ոգուտ՝ չկա ու չկա: Այդպես են անում միայն այն տերտերները, վոր թե ծեր են և թե մի քիչ միամիտ:

Բոլորովին այլ կերպ են վարվում խորամանկու գիտուն տերտերները: Աղոթք ու մատաղի յետեկց չեն ընկնում:

«Սպասիր, ասում են իրենք իրենց, աղոթքը չի փախչի, իր ժամանակն ունի»: Իսկ ժողովրդին ասում են՝ «առայժմ առանձին առանձին աղոթեցեք, աստված գուցե լսի»:

Մեկ ել տեսար՝ հանկարծ... զանգերը զարկեցին: Ժողովուրդը թափվեց: Ի՞նչ ե պատահել: Թափոր են անում:

Աղոթքն ու մատաղը սկսում են առավոտ, իսկ կեսորին ամպերը հավաքվեցին, մի քիչ ել հետո՝ անձրել սկսեց: Կամ հակառակը՝ ամպերը ցըլեցին և արել գուրս յեկավ:

Տերտերը ժողովրդի առաջ աստծուն ե փառաբանում, իսկ ժողովուրդը՝ տերտերին:

Բայց տերտերը քթի տակ գիտությունն ե գովում: Առանձին գործիք կա, բարոմետր ե կոչվում: Նա այնպես ե շինված, վոր յերկու որ առաջ ցույց ե տալիս յեղանակի փոխվելու մա-

սին: Պատահում ե, վոր նույնիսկ յերեք որ առաջ: Յեթե յեղանակը փոխվելու յե՛ս սլաքը սկսում ե շարժվել: Յեթե անձրեւ գալու, սլաքը դեպի ձախ ե շարժվում (ասում են՝ բարոմետրը ընկավ), իսկ յեթե յերաշտ ե սպասվում, շարժվում ե (բարոմետրը բարձրացավ) աջ կողմը:

Տերտերը իր սենյակում կախ ե տալիս այդպիսի բարոմետր և նայում, թե վո՞ր կողմն ե շարժվում սլաքը: Յեթե յերաշտ յե՛ս սլաքը սկսում ե դեպի ձախ շարժվել,—կնշանակի անձրեւ գալու: Կնշանակի կարելի յե՛ մաղթանքը, մատաղը սկսել: Այդ գործից կողտվեն և աստված, և տերտերը, և ժողովուրդը, վորն այդ հրաշք ե համարում:

Իսկ այն տերտերները, վոր բարոմետր չունեն, շատ ել չեն տիրում, յերբ իրենց աղոթքն «առ աստված լսելի չի լինում»: Պատճառը կամ մեղն իրենցը չի: Աստված չի լսում, հարկավոր ե յերկրորդ անգամ մաղթանք անել:

Հիմա տեսնենք ի՞նչ ե

համաճարակը:

Այդպիսի հիվանդություն տեղի յե ունենում անասունների և բույսերի մեջ: Պատահում ե, վոր հանկարծ գյուղացու ամբողջ հույսը՝ արտն ու ցանքար միանգամից վոչնչանում ե:

Որինակի համար—մորելիր:

Պատահում ե, վոր մի քանի տարի վոչինչ
չի լսվում մորեխի մասին: Բոլորը նրա մասին
նույնիսկ մոռանում են: Մեկ ել տեսար՝ հյուսիս-
արևելքից փշեց չոր ու տաք քամին ե, չես իմա-
նում թե վորտեղից, ամպի նման մորեխի բա-
նակները շարժվեցին:

Արևի լույսը խավարում ե, Յերեկը լույս չի
յերկում:

— Աստծու պատիմն ե,—ասում ե ժողովուրդը:

— Աստծու պատիմն ե,—կրկնում են տեր-
տերները:

— Կարծես յերկնքից ե ընկել մորեխը, ամեն
ինչ կերագ: Կնշանակե աստված մեր մեղքերի
համար մեզ պատժում ե:

ԶԵ՞ վոր մորեխը շատ ժամանակ չեր յերե-
փում: Յանկա՛րծ յերեաց, այն ել՝ յերկնքից:
Վորեւ պատասխան տալ հարկավո՞ր ե, թե՞ չե:
Իսկ պատասխանը պատրաստ ե—«կամ աստված ե
փորձում, կամ սատանան»:

— Ի՞նչ անել:

— Հարկավոր ե աղոթք անել, վորպեսզի
անիծածը վախենա ու չքանա:

— Վերցրու բուրգառ, վոչխարը մորթիր,
աղոթք արա:

Պարզ ե, վոր վոչ քո բուրգառից և վոչ ել
աղոթքիցդ մորեխը չի վոչնչանա:

Բայց տերտերներն իրենց գործը լավ են
իմանում: Նրանք ասում են, «Աստված ձեր
աղոթքը չի ընդունում, շատ ե բարկացել: Աղոթք
քիչ եք անում, մատաղ չեք մորթում, աստծու
տաճարը մոռացել եք»:

Բայց պատահում ե, վոր մորեխը ուտելիքի
պակասության պատճառով հեռանում ե ուրիշ
տեղեր:

— Տեսաք,—ասում են,—ձեր աղոթքը աստ-
ված լսեց: Փառք քեզ, աստված, վոր անիծած
մորեխը մեր արտերը ուտելուց հետո գնաց ուրիշի
արտերը, մեզ նման քրիստոնյաների արտերը
ուտելու:

Այստեղ եր ի հարկի՝ աղոթք, պատարա՛գ,
իսկ տերտերի գրանը—արծաթ փողը կղնդա:

Լավ ե՝ յեթե անձրկ ե գալիս, այդ գեպքում
մորեխը սպանվում ե: Չոր յեղանակին մորեխը
ուտում ե արտերը, իսկ վերջն ել ձգեր դնում
հողի մեջ: Վերջին գեպքում մի քանի տարի
շարունակ մորեխ ե լինում:

Գարնանը ձգերից դուրս են գալիս անթիվ,
միլիոնավոր մորեխներ, վորոնք արտերի մեջ
սողում են:

— Նորից փորձանք ե յեկել մեզ,—ասում են

տերտերները, իսկ նրանց յետեից կրկնում են
տգետ, անուս մարդիկ: —Գետնի միջից ե մո-
րեխը դուքս յեկել: Աշխարհի վերջն յեկել ե :

Նորից աղոթք, պատարագ, մատաղ:

Սրբերի պատկերները հանում են և տանում
արտերը, որհնած ջուր ցանում մորեխի վրա,
իսկ մորեխը իսկի ուշադրություն չի դարձնում՝
ուտում ե հա ուտում արտերը: Առղացող մո-
րեխը ցատկող ե դառնում, իսկ վերջը, յերբ
թերն են գալիս, թռչում են նոր տեղեր՝ վո-
չնչացնելու ուրիշ արտեր:

Առաջ մորեխի հետ կռվելու միակ միջոցը
անձրեն եր:

Այժմ զյուղատնտեսական գիտությունը դա-
լիս ե զյուղացուն ոգնելու:

Նախ հասկացան, վոր թե մորեխը և թե նրա
ձերը հարկավոր ե վոչնչացնել: Յերբ մորեխը
յերեռում ե, հարկավոր ե սրսկել վոչ թե որհնած
ջուր, այլ առանձին սրսկիչով բռնալիր հեղուկ:

Մորեխն ուտում ե թռւնավորած կանաչը և
վոչնչանում:

Այն տեղերը, վրատեղ մորեխն իր ձվերն ե
դրել, սկսում են ուշ աշնանը, առաջին ցրտերի
ժամանակ, նորից հերկել: Խոփով շուռ տված
ձվերը ցրտից փչանում են:

Դեռ ջահել, անթիվ մորեխը կանաֆերի մեջ

են քշում և հողով վրան ծածկում: Իսկ ցատկող
մորեխին քշում են հարդի կամ մեծ սավանի
մեջ: Սավանով տանում փոսերի մեջ են լցնում
ու թաղում, իսկ հարդը՝ վառում:

Այդպես են վարվում անկոչ հյուրի հետ:

Իսկ այժմ պետությունը ինքն է ձեռք առել
միջոցներ՝ մորեխը վոչնչացնելու: Դոն գետի յե-
ղեգների մեջ, կուբանի շըջանում, Անդրկովկա-
սում, Անդրկասպյան յերկում միշտ ել մորեխ
ել լինում: Այդտեղից ել, իր համար նպաստավոր
յեղանակներին, մորեխն ուրիշ տեղեր ե գնում:
Այն տեղերը, վորատեղ մորեխը բազմանում է,
գլխավորապես անմարդաբնակ տեղեր են: Մո-
րեխը վոչնչացնելու համար գործ են ածում հեղ-
ձուցիչ (խեղդող) զազեր: Նույն իսկ փորձեր են
արել վերեից՝ այերոպալանից թույն թափել: Շատ
լավ հետեանք ե ունեցել:

Յեթե հաջողվի մորեխի հայրենիքում նրան
վոչնչացնել, կնշանակի այլևս մորեխ չի լինի:
Զի լինի այլևս մորեխ վոչ յերկնից, վոչ զետ-
նից, վոչ աստծուց և վոչ ել սատանայից:

Այդպես կփոյնյանա ամեն մի վնասատու,
յերբ զիտոքյունը նրան հետեւի:

Ամեն մի խելացի մարդու համար պարզ կլինի,
վոր աստված գործ չունի վոչ չարիքի յերեան
գալու և վոչ ել նրան վերջ տալու մեջ:

Վերցնենք մի վորեկցե կենդանու հիվանդություն։ Որինակի համար՝

Մեկի կովը հիվանդացավ, սատկեց։

Տերը մաշկում ե կաշին, աղ ցանում վրան և իր բակում մի տեղ կախ տալիս։

Տանտիրոջ հորթերը, տեսնելով աղած կաշին, սկսում են լիզել և վարակվում են։ Հենց վոր կովերը յետ են գալիս դաշտից և հորթերը նրանց կաթը ծծում են, կովերն ել են հիվանդանում։

Ահա քեզ և համաճարակ։

Սատկած կենդանու մարմինը դուրս են զցում, իսկ չները ուտելով հիվանդանում են։

Շներից ել հիվանդությունը անցնում է վոչխարներին։

Ահա քեզ և «աստծու պատիժ»։

Ուրեմն բանից դուրս ե գալիս, վոր աստծու պատիժ չե, այլ ժողովրդական տգիառություն։

Վարակիչ հիվանդություն ե; Նրա տարածողը միկրոբներն են, վոր հասարակ աշքով չեն տեսնում։ Միկրոբ են կոչում շատ փոքրիկ եյակները, վոր կենդանու (որինակ՝ կովի) մարմինի մեջ ընկնելուն պես անչափ բազմանում են և տարածում ամբողջ մարմնի մեջ։ Այդ մեկրոներին կարելի յե տեսնել հատուկ պատրաստած դործիքի միջոցով, վոր միկրոսկոպ (խոշո-

րացույց) ե կոչվում։ Ուրեմն այդ միկրոբներով վարակված են լինում կենդանու և կաշին, և միաը, նույնիսկ վոսկորներն ու մաղերը։ Գետնի մեջ, որինակի համար, յերբ հիվանդությունից սատկած կենդանու մարմինը փթել ե, վարակումը մնում է 4—5 տարի։

Այժմ հասկանալի յե, վոր թոկից կամ պատից կախած կովի կաշվեց վարակումն աղի միջոցով անցնում է հորթերին, իսկ հորթերը իրենց մայրերի կաթը ծծելիս, նրանց վարակում են։ Շներն ել սատկած կովի մսից են վարակվում, իսկ վոչխարները շների հետ միենույն տեղերից ջուր խմելիս։

Յեթե առաջին հիվանդացած կովին անմիջապես թաղեն կամ այրեն (վոր ավելի լավ կլինի), վարակի առաջը կառնիի։

Թեև այդ մեկրոբները հասարակ աչքով չեն յերեռում, բայց և այնպես գիտնականները միկրոսկոպի միջոցով կարողացել են նրանց տեսնել և ուսումնասիրել։

Նրանք գտել են նաև մեկրոբների հետ կըռվելու միջոցները։ Նրանք գտել են մի տեսակ սրսկում (ինչպես ծաղիկի սրսկումը կաշվի տակ), վորից հետո կենդանին այլևս չի վարակի։

Այժմ պարզվում է, վոր կենդանիների հիվանդություն ճամբողը սատանան չե, և վոչ ել

բժշկողը՝ աստված, այլ անասնաբույժն եւ լավացնողն ու հիվանդության առաջն առնողը:

Վորտորդություն.

Վորսորդության մեջ ել կան մի շարք «հրաշքներ», ինչպես յերկրագործության ու խաճարածության մեջ:

Որինակի համար, այժմ Ռւրալում և Արևմտյան Սիբիրում սկյուռները իրար յետևից սատկում են; Յերբեք այնքան չեն սատկել, ինչպես այժմ; Յերբ սատկում են, նրանց մորթին բոլորովին անսպետք եւ դառնում գործածության համար, վորովճետե բուրդը թափվում եւ:

Անստեղի վորսորդները միայն սկյուռի մորթով են իրենց համար հաց ճարում: Արտաքին Առևտրի Ժողկոմը անցյալ տարի 18 միլիոնից ավելի գումարի սկյուռի մորթի յե ծախել արտասահմանում:

Պարզ ե, վոր այդպիսի հիվանդության առթիվ վորսորդների մեջ խառնաշփոթություն ընկալ: Սկսվեց սովորական բացատրությունը, գուշակումը...

Ասողներ կան, վոր չար մարդիկ «աչքով են տվել»...

Հավատացյալ կոապաշտները (այստեղ մինչև

հիմա յել կան) ի հարկե «միջոցներ» են ձեռք առնում:

Նրանք դուրս են բերում իրենց փոշոտած՝ փայտից, կաշվից, քարից շինած աստվածները, նրանց յերեաներին յուղ քսում, իսկ քրմերին (կոապաշտների տերտերներին) մատաղացու նվիրում:

Քրիստոնյաներն ել գուցե անտառների շուրջը մաղթանք են անում:

Իսկ սկյուռը հենց այդ ժամանակ սատկում ե:

Ի հարկե, գտնվեցին խելացի մարդիկ, վորոնք յեկան այն յեզրակացության, թե սկյուռների սատկելու պատճառը մի նոր հիվանդություն ե, վոր անհայտ ե: Հավաքեցին սատկած սկյուռների կաշիները և ուղարկեցին քննելու:

Այդ բանի մասին իմացավ մեր կառավարությունը և այստեղ ուղարկվեցին գիտուն մարդիկ՝ ուսումնասիրելու այդ նոր հիվանդությունն ու միջոցներ են ձեռք առել՝ վոչնչացնելու համար: Գիտուն մարդկանց համար հարցը պարզ ե, — մեղագորը վորեե վարակիչ հիվանդությունն ե: Այսպիս թե այսպես, հիվանդությունը կպարզվի և միջոցներ ձեռք կառնվեն: Հիվանդության պատճառը գտնվելուց հետո, դրա դեմք առաջուց կառնեն:

Նույն վիճակումն ե նաև՝

բույների հիմանդրության հաւցը:

Դիտնական գյուղատնտեսները արդեն պարզել են այդ տեսակ հիվանդություններից մեծ մասի պատճառը: Այժմ գիտեն, թե ինչից ե առաջ գալիս հիվանդությունն և ինչ միջոցներով կարելի յե դրա առաջն առնել:

Հարցը պարզելու համար՝ վերցնենք մի-յերկու որինակ:

Հացահատիկները շատ անգամ հիվանդանում են այսպես կոչված ժամկ հիվանդությամբ: Մի տեղնա մեկ տարի յերեսում ե, իսկ մյուս տարին անհայտանում: Բայց պատահում են դեպքեր, վոր այդ հիվանդությունը մի քանի տարի շարունակ արտերից չի հեռանում՝ ինչ միջոցների ել դիմեն:

Յեվ գիտնականները սկսեցին ժանգի հիվանդությանը հետևել, Բանից դուրս յեկավ, վոր ժանգը մի փոքրիկ աննկատելի սունկ ե, վորը միայն յերկու տեսակ բույսերի վրա յե ապրում: Սկզբում նա յերեան ե գալիս հացահատիկների հասկերի վրա և այսպես վնասում, վոր հունձը փչանում ե: Յերբ հունձը հավաքած ե, սունկը քամու միջոցով տեղափոխվում ե ծորենու (կծոխուրի) թփերին: Տեղափորվում ե այստեղ թփերի

վրա, բայց թփին առանձին վնաս չի տալիս: Աշնան վերջերին տերեներից տեղափոխվում ե թփի ճյուղերին և այնտեղ մնում մինչև գարուն: Գարունը բացվելուն պես նորից անցնում ե տերեների վրա: Հացահատիկների լցվելու ժամանակը սունկի սերմերը ծորենու թփի վրա արդեն հասնում են: Տաք որին սերմերը ողի մեջ են ցրվում, փոշիանում և քամին նրանց տանում ե դեպի արտերը: Ահա հենց դրանք նստում են հասկերի վրա և ցանքով փչացնում:

Հենց վոր գիտնականներն այդ գտան, վորոշեցին արտի մոտ գտնված ծորենու թուփը փոչնչացնել: Ի՞նչ եք կարծում:— Ժանգը վոչընչացավ:

Մի ուրիշ որինակ— կաղամբի հիվանդությունը, յերբ կաղամբի վրա սև բծեր են գոյանում:

Այդ մի ուրիշ տեսակի սունկ ե, վոր գետնի մեջ ե պահվում և կաղամբի արմատը փչացնում:

Հենց վոր այդ սունկն ընկնում ե մատաղ կաղամբի արմատի վրա, նա սկսում ե աճել և վերջը դառնում ե մի տգեղ գունդ: Կաղամբը սկսում ե նիհարել, թառամել և, յեթե սունկը շատ ե տարածվում, կաղամբը բոլորովին փչանում ե: Աշնան դեմ սևանում են արմատի վրայի գնդերը, վորոնց մեջ սունկի սերմեր են լցված:

Յեթե այդպիսի հասած սունկ-վարակը գետնի մեջ կամ բանջարանոցի մեջ թողնել, սունկի սերմերը գետնի մեջ նորից կտարածվեն և կարող են այնտեղ մնալ մինչև 4 տարի։ Յեվ հենց վոր նորից այդ տեղը կաղամբ կամ վորևեցեղակից բույս (բողկ, բեղիսկա, տակն և այլն) ցանեն, սունկը բույսերի արմատը նորից կփչացնի։

Կան տեղեր, վորտեղ հողը այդ սունկերով այնպես ե վարակվել, վոր կաղամբի նման բույսեր այնտեղ մշակել հարկավոր չե։

Գյուղատնտեսները հետևեցին և ուսումնասիրեցին այդ սունկը ու յեկան այն յեղբակացության, վոր սունկի սերմերը գետնի մեջ ընկնելուց ուղիղ հինգ տարի հետո՝ սերմերը վտանգավոր չեն լինում։

Բայց չե վոր չի կարելի սպասել և 5 տարին մի անգամ կաղամբ ցանել։

Ահա թե ինչ վորոշեցին գյուղատնտեսները։ Ամբողջ բանջարանոցը բաժանում են վեց մասի, դրանից մի մասի վրա յեն միայն կաղամբ կամ ցեղակից բույս ցանում։ Ամեն տարի կաղամբը ցանում են նոր տեղ։ Հին տեղում կաղամբ նորից ցանում են միայն հինգ տարի անցնելուց հետո։ Այն ժամանակ բույսը հազիվ թե հիվանդանա կաղամբի հիվանդությամբ։

Յեթե բույսը կրկին հիվանդանում ե, պատճառն են ե, վոր վարակը ուրիշ տեղից ե բերվել։

Այսպիսով գիտությունը պարզեց բոլոր համաձարակների պատճառը։ Վոչ մի բան չմնաց գաղտնի, և վոչ աստված և վոչ ել սատանան գործ չունեն այդ հարցերում։

Ի հարկե, բնության մեջ շատ սոսկալի յերեւ վույթներ կան, վորոնց ուսումնասիրությունը շատ ել թեթև բան չե։

Վերցնենք, որինակի համար՝

կայծակը, կարկուտը, հեղեղը։

Ամառվա տաք որը, հենց կեսորին, տաք անձրեսից հետո հանկարծ կարկուտ ե գալիս։

Յերկնքից ընկնում են սառցի կլոր կտորներ, յերբեմն հավի ձվի չափ։

Այնպիսի ուժով են վայր ընկնում, վոր դեպքեր են յեղել՝ հարվածից վոչխար ու այծ և սպանվել։

— Ամառը վո՞րտեղից սառույցը։

— Անպատճառ աստծու բանը կլինի կամ սատանի գործը, դրանցից մեկն իր լավ կամենալուց, իսկ մյուսը չարությունից, ամեն տեսակի անհամություն են ստեղծում մարդու համար։

Կարկուտից ազատվելու վոչ մի ճար չկա։
Անցնում ե արտերի վրայով, և ամեն ինչ
ջարդում իր ճանապարհին, և կանաչ արտերի
փոխարեն՝ մնում ե միայն սև հողը։ Յեթե հա-
սած արտերին ե խփում, այնպես ե ջարդում, վոր
ցեխն ու ցորենը իրարից չես կարող ջոկել։ Բան-
ջարանոցի վրայով անցնելիս, փչացնում ե բուշ-
սերը, իսկ պարտեզներում՝ գետին ե թափում
հասած ու խակ պտուղները։

Մտածեցին կարկտի դեմ ապահովագրու-
րյուն, ինչպես հրդեհի դեմ։ Այդ գործն, ի հար-
կե, ոգտակար ե, քանի վոր պետությունը մնասվո-
ղին ոգնության ե գալիս, բայց այդ դեռ չի նշանա-
կում չարիքի դեմ կռվել։ Բայց և այնպես ապա-
հովագրությունը վորոշ ոգուտ տալիս ե։ Միայն
ապահովագրությունը քիչ ե։ Հարկավոր ե գտնել
կարկտի պատճառը։ Պետք ե գտնել պատճառը և
հետը կռվել։

Այդ գործն՝ ուսումնասիրելու համար՝ ողա-
շուներն իրենց ձեռքն առան։

Այդ մարդիկ իրենց կյանքը վասնդի յենթար-
կելով, այերովանով բարձրացան շատ բարձր և
յեկան այն յեղբակացության, վոր նույնիսկ
ամառվա ամենատաք ժամանակը վերևում միշտ
ել ցուրտ ե լինում։

Տաք որերին ջերմացած ողը յերկրի յերեսից

ուժեղ հոսանքով վեր ե բարձրանում։ Յերկնքում
ամպերը կուտակվում են վորպես ծխի քուլա-
ները՝ հրդեհի վրա։ Նրանց ծայրերում քամի յե-
րարձրանում և սկսում անձրև գալ։ Ուժեղ քա-
մին անձրևի մի մասը վեր ե բարձրացնում և
այնտեղ ջրի կաթիները սառչում են։ Հենց վոր
ուժեղ քամին դադարում ե, անձրևի սառած
կաթիները թափվում են վար։

Անա թե ինչու կարկուտը այդպիսի ուժով ե
վայր ընկնում։

Այդպես ե բացատրվում կարկտի առաջ գալը։

Դիտնականները մտածեցին՝ ի՞նչ անեն, վոր
նրա առաջն առնեն։ Այստեղ ել մարդու խելքը
ուժեղ դուրս յեկավ։

Տաք որերին, յերբ կարկուտի վտանգ եյին
տեսնում, հավաքվող ամպերի ուղղությամբ վոր-
ձեցին թնդանողներից կրակել։ Բանից դուրս
յեկավ վոր այդ ոգնում ե։

Ամպերից ավելի շուտ անձրև ե գոյանում,
քան կարկուտ։ Այդպիսով չարիքի առաջն առնվեց։

Իտալական գյուղատնտեսները մի առանձին
տեսակի թնդանոթ հնարեցին, վոր կարկտային
թնդանոթ ե կոչվում։ Նրանք թանկ չեն, կրա-
կում են անգնդակ, իսկ նրանց ձայնը իսկական
թնդանոթի պայթյունի ե նման։

Այդ թնդանոթները առաջին անգամ սկսեցին

գործածել Լոմբարդիայում, վորտեղ կարկուտ շատ եր գալիս և արտերը փչանում։ Իսկ այնտեղից տարածվեց մյուս յերկրները։

Այդպիսով մարդը բնության այդ յերեսույթի դեմ ևս պայքարեց։ Մակայն միայն կարկուտը չէ, վորին մարդը հաղթեց։ Նա հաղթեց նաև կայծակին, վոր, յեկեղեցու սուրբ հայրերի ասելով՝ Յեղիա մարդարեն և ուղարկում։

Նրա մասին ել պատմենք։

Մոտենում ե փոթորկի ամպը, Զորս կողմը մթնում ե։

Հանկած—կայծակ։

Ում վոր խփում ե՝ մոխիր ե դարձնում, հըրդեհ գցում։

Ամպը գոռալիս—յերկիրը դողում ե։ Մարդու սիրտը փորն ե ընկնում։ Մարդիկ խաչակնքում են, պառավերը գուրս են գցում խարճակաթը։

Այդ յերեսույթը իսկապես շատ սարսափելի յե, և մարդուն զարմացնում եր։ Մարդը միշտ փնտրում եր պատասխան տալ։

Յերբ մարդ իրեն համար անբացարելի յերեսույթի պատճառն եր վինտրում, ամեն անգամ աստծուն եր վերագրում։ Փոթորկի համար ել մարդը մի առանձին աստված հնարեց։ Կոապաշտները ունեյին մի առանձին աստված, վորը

Պերուն—կայծակատուր եր կոչվում, Նրա արձանները շինում եյին՝ ձեռքինմիշտ մի փունջ նետերով։ Կոապաշտների ամենամեծ աստվածն եր դա։

Բայց ահա առաջ յեկավ քրիստոնեյությունը։

Կայծակները շարունակում եյին տեղի ունենալ։ Այս անգամ ով ե նրան յերկիր ուղարկում։

Ասել, թե հայր-աստված կամ սուրբ յերրորդությունն ե ուղարկում, անհարմար ե։ Շատ անհարմար գործ ե ամենակարողի համար և հետո ել փոթորկի ժամանակ, ամպերի մեջ, նա շատ մոտ եր լինելու։

Յեկեղեցու ուսուցիչները սկսեցին հարմար սուրբ փնտրել։

Փնտրեցին և գտան։

Աստվածաշնչի ասելով, Յեղիա մարդարեն իր ճշմարտախոսության համար յերկինքն ե տարվել, Յերկնքում ման գալու համար Յեղիա մարդարեյին հրեղեն ձկյերով հրեղեն կառք են տվել։ Փոթորկի բացատրությունը արդեն պատրաստ ե։

Բացատրությունը պատրաստ ե, բայց մի քիչ վատ ե դուրս յեկել, Վոնց ե լինում, վոր ճշշմարտախոս Յեղիա մարդարեն յերկրի վրա արդարություն ե քարոզում, իսկ յերկնքում սկզբործեր ե կատարում, Իսկապես վոր, յերբ ան-

ձրե ե գալիս՝ աստծու բարիքն ե։ Իսկ մեկ ել
տեսար՝ կայծակը փայլեց, խփեց վորեւ բանի,
մեծ մխաներ հասցրեց։

Ասում են՝ «Յեղիա մարդարեյի կառքն ան-
ցավ, հրեղեն սլաքը խփեց»։

Իսկ մի քիչ հետո կառքի դղրդոցն ե լսվում։
Ամպի գոռոցը քանի գնում կամաց կամաց նվա-
զում ե, կնշանակե՞ Յեղիան հեռանում ե։ Այնպես
ե դուրս գալիս, թե մարդարեն իր զոհին մոտե-
նում ե գաղտնի։ Չե՞ վոր կայծակը խփելուց
առաջ կառքը չի յերեռում։ Իսկ սլաքը նետելուց
հետո, պահվել չի կարելի, — և սկսում ե փախչել։

Մի քիչ լավ չի գուրս գալիս, յերբ ուժեղ
փոթորկի ժամանակ կայծակը միաժամանակ մի
քանի տեղերից ե փայլում։ Կնշանակե մի քանի
կառք կա և Յեղիա մարդարեն մենակ չե։

Շատ դեպքեր են յեղել, վոր կայծակը խփել
ու սպանել ե անմեղ յերեխայի կամ տափարի,
վորոնք մեծերի մեղքերի համար պատասխանա-
տու չեն։

Ինչքան վանք ու յեկեղեցի յե քանդվել Յե-
ղիա մարդարեյի այդ աշխատանքից։

Իսկ աստված ձայն չի հանում, տաղ ե արել։
Տերտերների՝ փոթորկի մասին տված բացա-
տրության մեջ շատ հակասություններ կան։

Իսկ գիտական բացատրությունը շատ պարզ ե
և հասարակ։

Սրանից յերկու հարյուր տարի առաջ հնար-
վել ե շանթարգելը, վոր յերկաթե արծաթածայր
մի ձող ե՝ առանձին մետաղե թելով գետնի հետ
միացրած։ Շանթարգելը մեծ տարածության
վրա կայծակը դեպի իրեն ե քաշում, իսկ բաց
տեղերում կարող ե ազդել մինչև յերկու վեստ
հեռավորության վրա։ Կայծակը խփում ե շան-
թարգելին՝ վոչ մի մխաս չտալով և թելով անց-
նում ե գետնի մեջ ու գետնի տակի ջրերում
անհայտանում։ Այդ շանթարգելի միջոցով ապա-
ցուցված ե, վոր կայծակը ելեքտրականություն
ե։ Ամպերի մեջ ելեքտրականությունը առաջ ե
գալիս անձրևի ժամանակ, և յերբ նա շատ ե կու-
տակվում, հավաքվում ե մի կայծի մեջ և անց-
նում մյուս ամպի մեջ, ուր ելեքտրականություն
քիչ կա, ե կամ գիտին, վորտեղ բոլորովին չկա։
Իսկ գոռոց այդ ժամանակ տեղի յե ունենում
նրա համար, վոր յելեքտրական կայծի թռչելու
ժամանակ ողը վառվում ե։ Այդ գոռոցը հարազատ
յեղբայրն ե այն գոռոցի, վոր տեղի յե ունե-
նում հրացանից կամ թնդանոթից կրակելիս։

Յեղիա մարդարեյի գաղտնիքը գիտությունը
բաց ե արել։

Յեղիա չկա։ Կա միայն բնորդյան հզոր ուժը —

յեղեցրականուրյունը, վորին մարդկային ուղեղը
հաղթելե և մարդու ոգտին ե ծառայեցնում:

Այդ ուժը այժմ խոնարհաբար վազ ե տալիս
մետաղե թելերով, հեռագիր տանում, հեռախոսի
խոսակցությունը տեղ հասցնում, ելեքտրիկ լամ-
պերում լույս տալիս, մեքենաներ շարժում, դաշ-
տեր հերկում, նրանց համար պարարտացման
հյութեր ու աղեր պատրաստում և մարդու հա-
մար շատ ուրիշ ոգտակար գործեր կատարում:

Գիտությունը յերկնքի հրաշքներին այդպես
ե հաղթել:

Վերջում մի դեպքի մասին ել ասենք—«գետնի
տակի հրաշքի մասին»,—թե ինչպես գետինը սեր-
մացուն չընդունեց:

Սրանից յերեսուն տարի առաջ Վոլգա գե-
տի ափերին յերաշտից հունձք չեղավ: Գյուղա-
ցիք նույնիսկ սերմացու չունեյին: Թագավորի
կառավարությունը իտալիայի հետ ցորենի մեծ
ու ոգտակար առեվտուր ուներ: Այնտեղ Ռու-
սաստանի ցորենից մակարոն են շինում—իտա-
լիացիների սիրած կերակուրը: (Ուրիշ յերկների
ցորենից վատ աեսակի մակարոն ե շինում):
Թագավորի կառավարությունը իր ոգտի համար
վորոշեց գյուղացիներին հացահատիկների սեր-

մնացու ապառիկ բաժանել: Սերմեր մատակա-
րաբելու գործը հանձնվեց թագավորական պա-
լատի մարդկանցից մեկին՝ Գուրկոյին և նրա
ընկերոջը՝ Լիդվալին, վորը պարապում եր ար-
տաքնոցի համար հարկավոր մասերի առևտորով:
Նրանք արտասահմանում (կարծեմ Ամերիկայում)
գնեցին ցորեն: Նրանք աշխատում եին ցորենը
եժան գնել, վոր շատ ոգուտ ստանան

Ցորենը տեղ հասավ բավական ուշ: Հազիկ
բաժանեցին: Գյուղացիք ցորենի յետկից գնա-
ցին ամենավատ ժամանակը և հազիկ ցանքսին
հասցըրին:

Սերմի վորակը վորձելու ժամանակ չկար:
Ինչ վոր ստացան՝ այն ել ցանեցին, բայց չնա-
յած լավ յեղանակներին, ցորեն չբուսավ:

Հազարավոր դեսյատին պաղաքեր սև հողը
բոլորովին մերկ մնաց: Ցորենը ցանելու ժամա-
նակն արդեն բաց եր թողնված: Հետո այդ դաշ-
տերում սկսեցին ցանել ինչ պատահեց, վորպես-
քի հողը դատարկ չմնա:

Թագավորական կառավարությունը այդ պա-
հել չկարողացավ, վորովիետե ամբողջ Յեվրոպան
իմացավ. և Լիդվալն ու Գուրկոն դատի հանձ-
նեցին:

Դատարանը գտավ, վոր գնված ցորենը սեր-
մի համար անպետք եր, ցորենը միայն ուտելու

համար եր: Իսկ գյուղացոց մեջ տարածվեցին լուրեր, թե «ոտար անհավատների ցորենը մեր հողը չի ընդունում»: Այդպիսի բացատրությունը ձեռնուու յեր ոուս առևտրականներին, վոր մյուս տարի իրենց ցորենը, վորպես հացահատիկ՝ պիտի գյուղացուն թանկ գնով ծախեյին: Մեկ ել՝ այդպիսի «բացատրությունը» անուս գյուղացիներին կհանգստացներ. Նրանք անբավական ելին կառավարությունից, վորը քաղցած գյուղացուն «հացի փոխարեն քար տվեց»:

Գտնվեցին սրիկաներ, վորոնք պատմում եյին, թե գիշերը դաշտում քնած ժամանակը լսել են—ինչպես «գետնի տակից ցորենի հատիկները յետ են դարձել Ամերիկա»:

Ուրիշ ավելի հիմար բացատրություններ ել եյին տալիս:

Սակայն գյուղատնտեսները այլ կերպ մոտեցան հարցին:

Նրանք հավաքեցին մնացած սերմերը, ուսումնասիրեցին, նայեցին խոշորացույց ապակիների տակ և ամեն ինչ պարզվեց: Պարզվեց, վոր ցորենը յերկար ժամանակ ամբարներում պահվելով վարակվել ե ամբարի վորդերով: Վորդերը վոչնչացնելու համար տերը ցորենը կրակի միջեց ե անցկացրել (շատ ուժեղ տաքացրել ե), վորից վորդի հետ միասին փչացել ե և հատիկի սերմը:

Գյուղատնտեսներն այդ իմացան, բայց ոտիպված յեղան լուելու: Նրանց սիհպեցին լուել: Տերտերների և թագավորի, զանազան սրիկաների ամեն տեսակ հնարած սուտերը տարածել կարելի յեր, իսկ գյուղացու աչքերը բաց անել չեր կարելի:

Գյուղատնտեսական գիտության լույսը քշեց խավարը և «հրաշքները» բացատրեց:

Այդ լույսի համար մեր յերկը ամեն մի անկյունում լայն ճանապարհ է բացվել: Գյուղացու, խաշնարածի և վորսորդի կյանքի բոլոր կողմերը նա պիտի լուսավորե:

«Աստծու կամքն» ու գյուղատնտեսական գիտությունը իրար հետ բավական վիճեցին: Այժմ գիտությունը հաղթել է:

Ճանապարհ տվեք գիտությանը:

ԽՈՐՀ. ՍՈՅ. ՀԱՆՐ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
— Հ ա յ կ ա ն ս ե կ ց ի ա —
Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10.

- Ի. ՍՏԱԼԻՆ—Գյուղացիական հարց: Գինը 50 կոպ.
Ի. ՍՏԱԼԻՆ—Ազգային հարցը: (Տպագրվում է):
Վ. ԼԵՆԻՆ Պատգամներ յերիտասարդուրյան. գինը 15 կ.
Ն. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ.՝ Լենինի պատգամները ժողովրդական
լուսավորուրյան մասին: Գինը 20 կ.
Զ. ԲՈՅԱՐՍԿԱՅԱ.՝ Կլարա Ֆեռվարի (կենսագր.): Գինը 10 կ.
Ն. ՏՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ.՝ Ազգային հարցը յեվ դպրոցը:
Գինը 40 կոպ.
Բ. ԺՈՎՈՐՈՆԿՈՎ.՝ Հասարակագիտուրյունը I աստիճանի
դպրոցում:
Ն. ԵԼԻԶԱՐՈՎ.՝ Խոնչ վորուեց կուսակցուրյան XIX հա-
մագումարը:
Ա. ԴՄԻՏՐՅԵՎ.՝ Տգիտությունը յեվ սնահավատուրյունը:
Գինը 15 կոպ.
Մ. ԼԻՎԵՆՍԿԻ.՝ Գյուղաճնեսական հարվ: Գինը 20 կ.
ՅԵՄԻՊՈՎ.՝ Գյուղացիուրյան պահանջները յեվ խորհրդա-
յին դպրոցի ծրագրեները: Գինը 12 կ.
Պ. Վ. Ա. ՍՈՎ.՝ Հաղի մշակումը յերաշի ժամանակ:
Գինը 40 կոպ.
Լ. ՅՈԶԵՖՈՎԻՉ.՝ Գյուղ կանգնի գերան կկոռրի (կոռպե-
րացիան զյուղում): Գինը 30 կոպ.
Ի. ՊՈԴՅՈՎՈՎԱԿԻ. Ասծու կամքը թէ՞ գյուղաճնեսական
գիտուրյունը:
ԳՈՒԳԼԻՆ - Փորող փայտից մինչեվ տրակտոր:
Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ.՝ Թէ ինչպես կարելի լե զյուղում ելեք-
տրականուրյուն անցկացնել:
Ա. ՄԿՈՄՈՐՈԽՈՎ.՝ Առաջին ոգնուրյունը հիվանդ կեն-
դանուն:

- Ա. ԲՐԱՆՍԲՈՒՐԳ—Ընտանի կենդանիների վարակիչ հիվանդությունները:
- Ե. ՍԵՄԱՇԿՈ—Թոքախ (պատկերազարդ):
- Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ—Յերեխանների վարակիչ հիվանդությունները:
- Վ. ԲՐՈՆՆԵՐ—Վեճերական ախտեր (պատկ.) գինը 25 կ.
- Ա. ՄՊԵՐԱՆՍԿԻ—Մոր ալբուրենը (պատկ.):
- Ե. ՄԵՄԵԿԻՆ—Արեվը, նրա վորդիները յեվ բռները:
(Տպագր.):
- Ա. ՈՈՒԲԻՆՇՏԵՑՆ—Ուղտից մինչեվ այերոպլան: (Տպագր.):
- Վ. ՅԱԶՎԻՑԿԻՑ—Մարդկային բնակարանի պատմութ:
- Մ. ԳՈՐԿԻՑ—Յերիտսասարդ գրողը: Մարդը:
- Ա. ՄԵՐԱՖԻՄՈՎԻՉ—Պատմվածքներ: (Տպագր.):
- Դ. ՄԱՄՄԻՆ-ՄԻԲԻՐՅՈՒԿ—Մոծակի յեվ արջի մասին:
(Պատկերազարդ): Գինը 13 կ.
- Պ. ՈՐԼՈՎԵՅ—Ճամբորդություն այերոպլանով: (Պատկերազարդ): Գինը 20 կ.
- Պ. ՈՐԼՈՎԵՅ—Քիմիկոս Կուզկան: (Պատկ.) գինը 25 կ.
- Ա. ԿՈՒՊՐԻՆ—Յերկրի խորեւում: (Պատկ.) գինը 15 կ.
- Ա. ՆԵՎԵՐՈՎ—Ինչպես ելին ապրում տիկնիկները յեվ ինչ արեց արճինք զինվորը: (Պատ.) Գինը 16 կոպ.
- Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ—Ինչպես Սաբոն Կարմիր Բանակային դարձավ: Գինը 35 կոպ.
- Ֆ. ՖՈԲՍ—Մինիստ մեկ ժամով: (Պատկ.) գինը 20 կ.
- ՅԵ. ՈՅԴԴԻՆ—Պիոներ, պահպանիր առողջություններ:
Գինը 10 կ.
- ՈՒԺՈՎ—Պատանի պիոներ: (Ժողովածու): (Տպագր.):
- Դիմել՝ Կենտրիզդատ, Մոսկվա, Никольская, 10
Կամ Հայաստանի Պետրասին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0291421

14874

ԳԻԱԸ 20 ԿՈՐԵԿ



И. ПОДЪЯПОЛЬСКИЙ

Божья воля,
или
агрономическ. наука?

На армянском яз.

63

Դ-74

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва

Никольская 10.